ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

25.01.2024 20:04

Հարգելի փաստաբաններ,

Սույն թվականի փետրվարի 1-ից դատարան ներկայացվող նոր դատական գործերով բոլոր դատավարական փաստաթղթերի կազմման և ներկայացման համակարգի շուրջ առաջացած մտահոգությունների առնչությամբ տեղեկացնում ենք.

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում էլեկտրոնային եղանակով իրականացվող դատավարական և այլ գործողությունների առանձնահատկությունները նախատեսող գլուխը իր համապատասխան կարգավորումներով ընդունվել է 2023թ. դեկտեմբերի 22-ին, որով ուժի մեջ մտնելու ժամկետ է նախատեսվել՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ էլեկտրոնային համակարգի գործարկման մասին հայտարարության հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Վերոնշյալ հայտարարությունը Բարձրագույն դատական խորհուրդը հրապարակել է 2024թ. հունվարի 22-ին, ուստի՝ համակարգի գործարկմանը նախապատրաստելու ժամկետները բավականին սուղ են:

ՀՀ փաստաբանների պալատը, մտահոգ լինելով համակարգի գործարկման սուղ ժամկետներով, հրավիրել է ծրագրի հեղինակ Masys Information Systems կազմակերպության ներկայացուցիչներին վերապատրաստման դասընթացներ անցկացնելու համար:

Դասընթացը տեղի կունենա 2024թ. հունվարի 29-ին՝ ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատում,հասցե՝ ք. Երևան, Ջաքյան 7/3, 4-րդ հարկ դահլիճ:

Հարգելի՛ գործընկերներ,

Դասընթացին հեռավոր ձևաչափով միանալու համար մանրամասները կուղարկվի Ձեր էլեկտրոնային փոստի հասցեին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })